

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Բիո-Քիմ ՍՊԸ-ն ՎՁԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/04 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԲԻՍԻ ԴԵԶԻՆՈՆ	ԲԻՈ-ՔԻՄ ՍՊԸ	<p>BC DEZINON Հեղուկ խտանյութ մաքրման և նախամանրեագերծումային ախտահանման համար BC Dezinon-ը նախատեսված է տարբեր տեսակի ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների (Ներառյալ բուռեր, բերանի խոռոչի գործիքներ, ունելիներ, զոնդեր, դրիլներ և այլն), ճկուն և կոշտ էնդոսկոպների, բժշկական սարքավորումների և լաբորատոր սպասքի արագ և բարձ կարգի ախտահանման համար: Հատկությունները - Չի պարունակում ալդեհիդ, ֆենոլ և սպիրտ -Պիտանի է բոլոր ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների համար - Առավելագույնս տնտեսող է և ունի արագ ազդեցություն - Ունի լավ մաքրող և ախտահանող ազդեցություն - Կոռոզիա չի առաջացնում: Բաղադրությունը BC Dezinon-ը պարունակում է դիդեցիլդիմեթիլամոնիում քլորիդ, պոլիհեքսամեթիլենգուլանիդին հիդրոքլորիդ, ոչ իոնային մակերևութաակտիվ նյութ, լաուրիլդիմեթիլամինօքսիդ, կոռոզիայի ինհիբիտոր, օժանդակ նյութեր և ջուր: Կիրառումը Առաջարկվող չափաքանակը 0.1% - սովորական կիրառման համար 0.5% - ախտահանման</p>

և նախամանրեագերծման համար: Օգտագործման եղանակը Պատրաստել BC Dezinon միջոցի անհրաժեշտ կոնցենտրացիայի լուծույթ՝ խտանյութը ջրի հետ խառնելով և օգտագործել ստացված լուծույթը ախտահանման և նախամանրեագերծումային մաքրման համար: Պատրաստել BC Dezinon-ի 0.5%-ոց լուծույթ, ախտահանվող գործիքները ընկղմել լուծույթի մեջ և թողնել այնտեղ 30 րոպե: Չգուշությամբ հանել գործիքները լուծույթից, լվանալ հոսող ջրի տակ կամ մաքուր ջրի մեջ, չորացնել և պահել: Ավելի մանրամասն ախտահանման ձևերի և տևողության մասին կարող եք կարդալ օգտագործման հրահանգում: Ազդեցության ոլորտը Հակամանրեային ազդեցություն (գրամդրական և գրամաբացասական մանրէներ ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաներ), մանրէներ (ներառյալ կանդիդոզ և դերմատոֆիտիա), վիրուսներ (ներառյալ հեպատիտ A,B,C, ՄԻԱՎ վարակի հարուցիչներ, պոլիոմելիտ): Անվտանգության կանոններ -Օգտագործել լավ օդափողվող տարածքներում՝ կրելով պաշտպանիչ դիմակ և ձեռնոցներ: - Պահել երեխաներին անհասանելի տեղում՝ +5°C-ից +35°C ջերմաստիճանում: - Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո: - Աշխատանքային լուծույթների պահպանման ժամկետը 14 օր է: - Լուծույթները պահել մաքուր, հերմետիկ փակվող տարաներում: - Չգուշանալ աչքերի մեջ և մաշկի վրա ընկնելուց: Ընկնելու դեպքում անմիջապես լվանալ առատ ջրով: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի: Փաթեթավորում Տարա-1000 մլ.

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Բիո-Քիմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎՁԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
3			